



Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇԻՎՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

Ելենա Մանուկյան

Երևան - 2010



ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն



Գերմանական տեխնիկական
համագործակցության ընկերություն

1. Ազգային հաշիվների համակարգը

- Ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ) փոխկապակցված վիճակագրական ցուցանիշների համալիր է, որը բնութագրում է տնտեսության մակրոտնտեսական գործընթացները:
- ԱՀՀ-ն բաղկացած է մակրոտնտեսական հաշիվների, հաշվեկշիռների և աղյուսակների փոխկապակցված համակարգից, որը հիմնված է միջազգայնորեն ընդունված հիմնադրույթների, սահմանումների, դասակարգումների և հաշվապահական կանոնների ամբողջության վրա:

- ԱՅՅ-ն ` տնտեսության վերլուծության համար նախատեսված միջավայր է, որում համակարգված կերպով լրացվում և ներկայացվում են մակրոտնտեսական ցուցանիշները:
- ԱՅՅ-ն ձևավորում է միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանող համակարգ, որի նպատակն է տեղեկատվության անընդհատ հոսքի ապահովումը` երկրի տնտեսական գործունեության վերլուծության, գնահատման և մոնիթորինգի համար:
- ԱՅՅ-ն անգնահատելի է միջազգային համեմատությունների, միջժամանակային համադրումների և մակրոտնտեսական հետազոտությունների համար:

- ԱՅՏ-ն հասարակության տարբեր անդամներին արժեքավոր տեղեկություն է տալիս տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին և վիճակագրական բազա նախապատրաստում կանխատեսումներ կատարելու համար: Այլ կերպ՝ ազգային հաշիվները տեղեկատվություն են պարունակում տնտեսավարող սուբյեկտների՝ նախկինում ընդունած որոշումների մասին, ինչպես նաև արտացոլում են տնտեսական կապերի դինամիկան:
- Այսպիսով՝ ԱՅՏ-ի հիմնական գործառույթը անցյալում իրականացված տնտեսական գործունեության առավել համապարփակ ու ամբողջական ներկայացումն է, որպեսզի՝
 1. պարզորոշ երևա պետության տնտեսական գործունեությունը (տնտեսական քաղաքականության գործառույթ),
 2. հնարավորություն ընձեռվի ապագայի կանխատեսումների համար (տնտեսական կանխատեսման գործառույթ):

- ԱՀՀ-ում գոյություն ունի հստակ տարանջատում ներքին և ազգային տնտեսություն հասկացությունների միջև:

Դրանք ունեն տնտեսագիտական տարբեր նշանակություն և, կախված վերլուծության նպատակից, տարբեր կարևորության աստիճան: Սա հասկանալու համար անհրաժեշտ է պարզաբանել նաև հետևյալ հասկացությունները՝

- ✓ տնտեսական տարածք,
- ✓ տնտեսական շահերի կենտրոն,
- ✓ ռեզիդենտ,
- ✓ ոչ ռեզիդենտ:

- **Տնտեսական տարածք** ասելով, հասկանում ենք տվյալ պետության իրավասության տակ գտնվող աշխարհագրական այն տարածքը, որի սահմաններում ազատ կերպով կարող են տեղաշարժվել աշխատուժը, ապրանքները և կապիտալը:

Երկրի տնտեսական տարածքը չի ներառում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տարածքները, որոնք գտնվում են տվյալ երկրի աշխարհագրական սահմաններում: Օրինակ՝ օտարերկրյա ռազմական բազաները, դեսպանատները, ՀԲ, ԱՄՅ գրասենյակները չեն կազմում տվյալ երկրի տնտեսական տարածքը:


Երկրի տնտեսական տարածքը ներառում է օտարերկրյա պետություններում գտնվող այն տարածքները, որոնք սեփականության կամ վարձակալման իրավունքով գտնվում են տվյալ երկրի կառավարության կամ ձեռնարկությունների իրավասության տակ՝ դիվանագիտական, գիտական, ռազմական նպատակներով օգտագործման համար:

- Տնտեսավարող միավորի համար տնտեսական շահերի կենտրոն է համարվում տվյալ տնտեսական տարածքը, եթե տնտեսավարող միավորին է պատկանում տնտեսական տարածքում գտնվող որևէ կառույց կամ հողատարածք և որտեղ նա կատարում է կամ նպատակ ունի կատարելու նշանակալից տնտեսական գործունեություն անորոշ երկար կամ որոշակի, բայց զգալի երկար, ժամանակահատվածում: Այս իմաստով էլ տնտեսական միավորները դասակարգվում են երկու խմբի՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների:
- **Ռեզիդենտը** տնտեսավարող միավոր է, որի տնտեսական շահերի կենտրոնը գտնվում է տվյալ տնտեսական տարածքում: Ընդգծենք, որ «ռեզիդենտ» հասկացությունը չի համընկնում քաղաքացի կամ ազգություն հասկացությունների հետ:
Գործնականում, տվյալ երկրի ռեզիդենտ են համարվում այն անձինք, որոնք բնակություն են հաստատել տվյալ տարածքում, բացառությամբ այն սուբյեկտների, որոնք ժամանել են մինչև մեկ տարի ժամանակով, ինչպես նաև այլ երկրների դեսպանության աշխատակիցների, ուսանողների, զինծառայողների և բուժման նպատակով ժամանածների:

Ներքին և ազգային տնտեսություններ

- Ներքին տնտեսությունն ընդգրկում է տվյալ երկրի տնտեսական տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների տնտեսական գործունեությունը:
- Ազգային տնտեսությունն ընդգրկում է բոլոր ռեզիդենտների տնտեսական գործունեությունը, որոնք տեղաբաշխված են, ինչպես տվյալ երկրի տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

1.1. Տնտեսության հիմնական հատվածները



Տնային տնտեսություններ

- **Տնային տնտեսություններ (SS)** հատվածին են պատկանում տվյալ երկրի ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք կամ անձանց խմբերը, որոնք բնակվում են միասին և ունեն ընդհանուր բյուջե: Բոլոր տնային տնտեսությունները սպառող են, և, միևնույն ժամանակ, զբաղվում են նաև այնպիսի ձեռնարկատիրական գործունեությամբ, որը թե՛ իրավական և թե՛ տնտեսական տեսանկյունից անհնար է տարանջատել տնային տնտեսություններից: Տնային տնտեսությունների արտադրանքն իրացվում է ինչպես տնտեսության ներսում, այնպես էլ նրանից դուրս:

Տնային տնտեսությունների ռեսուրսները գոյանում են վարձու աշխատանքից, ձեռնարկատիրական գործունեությունից, ինչպես նաև սեփականությունից ստացվող եկամուտներից և տրանսֆերտային մուտքերից:

Ֆիրմաներ (ձեռնարկություններ)

Առանձնանում են

- Ոչ ֆինանսական կառուցվածքային միավորները
- SS-ներին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները
- **Ոչ ֆինանսական կառուցվածքային միավորների հիմնական գործառույթը`** ապրանքների և ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությունն է այնպիսի գներով, որ ապահովվի շահույթ:
Այդ միավորների եկամուտները հիմնականում ձևավորվում են արտադրանքի կամ ծառայությունների իրացումից:
Որոշակի դեպքերում հնարավոր է, որ ծախսերը գերազանցեն եկամուտներին, և վնասները ծածկվեն պետական սուբսիդիաներով:
- **SS-ներին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները միավորում են այն կառուցվածքային միավորներին, որոնք զբաղվում են տնային տնտեսություններին ոչ շուկայական ծառայություններ մատուցելով:** Այստեղ ընդգրկված են այն կազմակերպությունները, որոնք չեն ֆինանսավորվում պետության կողմից և չեն գտնվում պետության ուղղակի վերահսկողության տակ:
Այս միավորների ռեսուրսները գոյանում են անդամավճարներից, նվիրատվություններից և սեփականությունից ստացվող եկամուտներից:

Ֆիրմաներ (ծեռնարկություններ), շարունակություն

- **Տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները** միավորում են այն կառուցվածքային միավորներին, որոնք զբաղվում են տնային տնտեսություններին ոչ շուկայական ծառայություններ մատուցելով: Այստեղ ընդգրկված են այն կազմակերպությունները, որոնք չեն ֆինանսավորվում պետության կողմից և չեն գտնվում պետության ուղղակի վերահսկողության տակ:
- Այս միավորների ռեսուրսները գոյանում են անդամավճարներից, նվիրատվություններից և սեփականությունից ստացվող եկամուտներից:

Պետական հատված

- **Պետական հատվածն** են կազմում այն կառուցվածքային միավորները, որոնք զբաղված են հասարակական պահանջունքները բավարարող ոչ շուկայական (հասարակական) ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև ազգային եկամտի վերաբաշխմամբ: Այս հատվածին են պատկանում կենտրոնական և տեղական կառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Այս հատվածում են նաև պետական արտաբյուջետային հիմնադրամները (օրինակ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը):
- Այս հատվածի ռեսուրսները գոյանում են այս հատվածին չպատկանող ձեռնարկությունների պարտադիր մուծումներից, ինչպես նաև պետական սեփականության օգտագործումից ստացվող եկամուտներից:

Ֆինանսական հատված

- Ֆինանսական հատվածում, անկախ սեփականության ձևից, ընդգրկված են այն կառուցվածքային միավորները, որոնք զբաղված են գերազանցապես ֆինանսական և ապահովագրական գործառնություններով՝ հետապնդելով առևտրային նպատակներ: Ֆինանսական գործառնություններ ասելով հիմնականում հասկանում ենք ֆինանսական միջնորդության և օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցելու հետ կապված գործունեությունը:
- Այս հատվածի ռեսուրսները գոյանում են գերազանցապես ստանձնված պարտավորություններից և ստացված տոկոսային եկամուտներից: Ապահովագրական ընկերությունների գործունեության ոլորտը, որպես կանոն, ֆինանսական ռիսկերից կամ անկանխատեսելի իրավիճակներից տնտեսավարող միավորների պաշտպանությունն է: Նրանց եկամուտները հիմնականում գոյանում են ապահովագրական պայմանագրերից բխող վճարներից:

Արտաքին հատված

- Արտաքին հատվածն ընդգրկում է արտասահմանյան երկրների ռեզիդենտների գործառնություններն այն չափով, որով դրանք առնչվում են տվյալ երկրի ռեզիդենտների հետ:
- Վերը թվարկված հատվածների փոխադարձ կապն այլ երկրների հետ արտացոլելու նպատակով ձևավորվում է պայմանական հատված՝ «արտերկիր», որը միավորում է բոլոր ինստիտուցիոնալ միավոր ոչ ռեզիդենտներին այն մասում, որտեղ դրանք փոխհամագործակցում են ազգային տնտեսության ռեզիդենտների հետ:

1.2. Հիմնական ազդեցագումները

1. Համախառն ներքին արդյունքը

- Երկրի տնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշը համախառն ներքին արդյունքն է (ՀՆԱ):

Այն օգտագործվում է տնտեսական արդյունավետության, միջազգային համադրումներ կատարելու, աշխատանքի արտադրողականության և բնակչության բարեկեցության մակարդակը գնահատելու և բազմապիսի ցուցանիշներ հաշվարկելու նպատակով:

- ՀՆԱ-ն որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) երկրի տնտեսական տարածքում արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառայությունների գումարային արժեքն է արտահայտված շուկայական գներով:

ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդները

ՀՆԱ-ն կարելի է հաշվարկել վերարտադրության ցանկացած փուլում համապատասխան մեթոդով՝

- արտադրական մեթոդն օգտագործվում է ապրանքների և ծառայությունների արտադրության փուլում,
- եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկը կատարվում է բաշխման փուլում,
- եկամուտների օգտագործման մեթոդը (ծախսային մեթոդ) կիրառվում է եկամուտների ծախսման փուլում:

Պարզաբանենք որոշ հասկացություններ, որոնց միջոցով արդեն հնարավոր կլինի բացահայտել ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդները:

Համախառն թողարկումը

- Համախառն թողարկումը որոշակի ժամանակահատվածում արտադրված նյութական ապրանքների և մատուցված ծառայությունների գումարային արժեքն է՝ ներառյալ ինչպես շուկայական, այնպես էլ ոչ շուկայական ապրանքները և ծառայությունները:
- Շուկայական ապրանքների և ծառայությունների թողարկումը ընթացիկ ժամանակաշրջանում ընդգրկում է՝ շուկայական գներով իրացումը, ապրանքների և ծառայությունների բարտերային փոխանակումը, աշխատանքի վարձատրության փոխարեն բնափրային տեսքով տրված ապրանքները, պահուստավորված նյութական շրջանառու միջոցները:
- Ոչ շուկայական թողարկումն ընդգրկում է այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք՝ օգտագործվել են սեփական կարիքների համար, փոխանցվել են այլ տնտեսավարող միավորին՝ անվճար կամ այնպիսի ցածր գներով, որը չի ազդում ընդհանուր պահանջարկի վրա:

Ավելացված արժեք

- Ապրանքների և ծառայությունների արտադրության ժամանակ օգտագործվող այլ ապրանքներն ու ծառայությունները, բացառությամբ հիմնական կապիտալի սպառման, համարվում են միջանկյալ սպառում: Միջանկյալ սպառումը կազմված է ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնք տվյալ ժամանակահատվածում արտադրության գործընթացում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են:
- Միջանկյալ սպառում է համարվում նաև զրոյական արդյունք տվող ֆինանսական միջնորդների կողմից անուղղակիորեն չափվող ծառայությունների մատուցումը, որը նույնն է, ինչ նրանց կողմից ստացված զուտ տոկոսային եկամուտները:
- Համախառն թողարկման և միջանկյալ սպառման տարբերությունն իրենից ներկայացնում է համախառն ավելացված արժեքը: Հիմնական գներով ավելացված արժեքը՝ արտադրության ցուցանիշ է, որը որոշվում է ապրանքների և ծառայությունների թողարկման և միջանկյալ սպառման տարբերությամբ և չի ներառում արտադրանքի և ներմուծման հարկերը, սակայն ներառում է սուբսիդիաները:

ՀՆԱ-ի հաշվարկման արտադրական մեթոդը

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն հաշվարկելու ժամանակ գումարվում է տնտեսությունում ստեղծված համախառն ավելացված արժեքը (հիմնական գներով) և արտադրանքի և ներմուծման գուտ հարկերը (առանց սուբսիդիաների)

$$\text{ՀՆԱ} = \text{Համախառն թողարկում} - \text{միջանկյալ սպառում}$$

կամ՝

$$\text{ՀՆԱ} = \text{Գործոնային գներով ավելացված արժեք} + \\ + \text{գուտ անուղղակի հարկեր}$$

Եկամուտների ձևավորման մեթոդով ՀՆԱ-ի հաշվարկը

- ՀՆԱ-ն որոշվում է որպես սկզբնական եկամուտների գումար, որը ռեզիդենտ արտադրողի կողմից քաշխվել է ապրանքների և ծառայությունների արտադրության անմիջական մասնակիցների միջև: Այսինքն՝ դրանք ռեզիդենտ արտադրողի ծախսերն են՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը, արտադրության ու ներմուծման զուտ հարկերը, ինչպես նաև համախառն շահույթն ու խառը եկամուտը:
- Այսպիսով՝
$$\text{ՀՆԱ} = \text{աշխատանքի վարձատրություն} + \text{եկամուտներ սեփականությունից} +$$
$$+ \text{արտադրության և ներմուծման զուտ հարկեր} + \text{հիմնական կապիտալի սպառում}$$
- Եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն հնարավորություն է տալիս վերլուծել եկամուտների կազմն ու կառուցվածքը: Տնտեսական հետազոտություններ կատարելիս այս մեթոդն ունի կարևոր նշանակություն եկամուտների վերլուծության, ճյուղերի և հատվածների հարկային բեռի համեմատական գնահատականը տալու, տնտեսավարող միավորների ձեռնարկատիրական գործունեությունից և սեփականությունից ստացված եկամուտներից ելնելով շուկայական հարաբերությունների զարգացման աստիճանը պարզաբանելու և այլ նպատակներով:

Եկամուտների օգտագործման մեթոդով ՀՆԱ-ի հաշվարկը

- Ցույց է տալիս, SS-ները, պետական մարմինները և այլ կառուցվածքային միավորները ինչպես են բաշխում իրենց տնօրինվող եկամուտը՝ վերջնական սպառման և խնայողության միջև:
- Եկամուտների օգտագործման մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն (GDP)՝ վերջնական սպառման (C), համախառն կուտակման (I) և ապրանքների ու ծառայությունների զուտ արտահանման (NX) գումարն է՝

$$\begin{aligned} \text{ՀՆԱ} = & \text{ապրանքների և ծառայությունների վերջնական սպառում} + \\ & + \text{համախառն կուտակում} + \text{արտահանում} - \text{ներմուծում} \\ & \text{կամ} \end{aligned}$$

$$\text{GDP} = \text{C} + \text{I} + \text{NX} = \text{C} + \text{I} + (\text{X} - \text{M}),$$

որտեղ

X-ը՝ ապրանքների և ոչ գործոնային ծառայությունների արտահանումն է,
M-ը՝ ապրանքների և ոչ գործոնային ծառայությունների ներմուծումն է, իսկ
C-ի կազմում ընդգրկված է պետական և ոչ պետական հատվածների վերջնական սպառումը:

- Այս մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն հնարավորություն է տալիս վերլուծել վերջնական սպառման և ազգային հարստության մեծացման նպատակով օգտագործված ՀՆԱ-ի համամասնությունները, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում:

2. Համախառն ազգային արդյունքը

- Համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) շուկայական գներով հաշվարկված սկզբնական եկամուտների գումարն է, որը ստացել են տվյալ երկրի ռեզիդենտները՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցելով իրենց երկրի և արտերկրի ՀՆԱ-ի թողարկմանը:

ՀԱԱ = ՀՆԱ + ռեզիդենտների ստացված գործոնային եկամուտներ (այլ երկրներում) –
- ոչ ռեզիդենտների ստացված գործոնային եկամուտներ (տվյալ երկրում)

կամ

$$\text{GNI} = \text{GDP} + Y_f$$

որտեղ

ՀԱԱ՝ համախառն ազգային արդյունքն է,

Y_f գուտ գործոնային եկամուտն է արտերկրից

3. Համախառն ազգային տնօրինվող եկամուտը

- Համախառն ազգային տնօրինվող եկամուտը (ՀԱՏԵ) եկամտի այն մեծությունն է, որը ռեզիդենտները կարող են օգտագործել սպառման և կուտակման նպատակով:

ՀԱՏԵ = ՀԱԱ + զուտ ընթացիկ տրանսֆերտներ արտերկրից
կամ

$$\text{GNDI} = \text{GNI} + \text{TRf} = \text{GDP} + \text{Yf} + \text{TRf}$$

որտեղ

GNI՝ համախառն ազգային տնօրինվող եկամուտն է,

TRf՝ զուտ ընթացիկ տրանսֆերտներն են արտերկրից

4. Համախառն ազգային խնայողությունները

- Համախառն ազգային խնայողությունները (S) հաշվարկվում են որպես համախառն ազգային տնօրինվող եկամտի և վերջնական սպառման (C) տարբերություն

$$S = \text{GNDI} - C$$

2. Չափվների հիմնական փոխկապվածությունները

Ազգային հաշիվների միջև փոխկապվածությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

$$\text{GDP} = C + I + (X - M) = A + (X - M)$$

$$\text{GNI} = \text{GDP} + Y_f = C + I + (X - M) + Y_f = A + (X - M + Y_f)$$

$$\text{GNDI} = \text{GNI} + \text{TR}_f = \text{GDP} + Y_f + \text{TR}_f = A + (X - M + Y_f + \text{TR}_f) = A + \text{CAB}$$

հետևաբար

$$\text{GNDI} - A = \text{CAB}:$$

Մյուս կողմից, համաձայն սահմանման $\text{GNDI} - C = S$, հետևաբար

$$\text{GNDI} - C = I + (X - M + Y_f + \text{TR}_f) = S:$$

$$\text{Արդյունքում } S - I = \text{CAB},$$

որտեղ

A ՝ ներքին պահանջարկն է կամ ներքին արտադրության ($A = C + I$),

CAB ՝ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հաշվելիքը ($\text{CAB} = X - M + Y_f + \text{TR}_f$),

C ՝ վերջնական սպառումը,

I ՝ համախառն ներդրումները (ընդգրկում են ամորտիզացիան),

S ՝ համախառն ազգային խնայողությունները,

X և M ՝ արտահանքերի և ոչ գործոնային ծառայությունների արտահանումն ու ներմուծումը:

3. ՊՊԿ-ի մակարդակի գնահատումը

- ՀՀ-ում ՊՊԿ-ի ընդհանուր մակարդակի փոփոխությունները չափվում են սպառողական ՊՊԿ-ի ինդեքսի (ՍՊԿ) միջոցով:
- Այժմ ՍՊԿ հաշվարկման համար բազային է համարվում 2005 թվականը:
- ՍՊԿ հաշվարկը կատարվում է ըստ 470 ապրանք-ծառայության ցուցանիշների:
- ՍՊԿ-ի հաշվարկման համար Երևանում և ՀՀ բոլոր մարզերում սահմանված մեթոդաբանությամբ կատարվում է սպառողական ՊՊԿ-ի ամենամսյա դիտարկում:

Ըստ մարզերի ՊՊԿ-ի դիտարկումները կատարվում են հետևյալ քաղաքներում

Արագածոտն – Թալին,
Արմավիր – Վաղարշապատ,
Գեղարքունիք – Մարտունի,
Լոռի – Վանաձոր,
Կոտայք – Հրազդան, Չարենցավան,
Շիրակ – Գյումրի,
Սյունիք – Կապան,
Վայոց Ձոր - Եղեգնաձոր,
Տավուշ - Դիլիջան,
Արարատ - Արտաշատ:

- ✓ հետազոտվող քաղաքներում ամեն ապրանքատեսակի համար գների դիտարկումը կատարվում է նախապես ընտրված 9-12 բազային առևտրական կազմակերպություններում՝ անկախ սեփականության ձևից,
- ✓ գները դիտարկվում են ամեն ամսվա համար 3 անգամ՝ տվյալ ամսվա 1-ի, 10-ի և 20-ի մոտակա օրերին,
- ✓ գրանցված գների հիման վրա կատարվում է միջին ամսական գների հաշվարկ՝ ըստ դիտարկվող քաղաքների և ապրանքատեսակների,
- ✓ գների դիտարկման համար ապրանք (ծառայության) – ներկայացուցիչների ընտրանքը կատարվում է, հաշվի առնելով սպառողական շուկայում դրանց հազեցվածության և սպառման աստիճանը, արդիականությունը, ներկայացուցչական լինելը և այլն՝ նշելով դրանց տեխնիկական բնութագրերը, չափման միավորները և այլ անհրաժեշտ հատկանիշները,
- ✓ գնային տեղեկատվական բազայի հիման վրա կատարվում է սպառողական գների ամփոփ ինդեքսի հաշվարկ՝ ըստ մարզերի և հանրապետության, ըստ 10 խոշոր և 64 խոշորացված ապրանքախմբերի, ինչպես նաև 470 անվանում ապրանքների և ծառայությունների,
- ✓ ՍԳԻ-ն հաշվարկվում է **Լասպեյրեսի** կշռված ինդեքսային բանաձևով:

Այսպիսով ՍԳԻ-ն հաշվարկվում է սպառողական զամբյուղի կշիռների և սպառողական գների հիման վրա: Այն բնութագրում է ապրանքների և ծառայությունների հաստատուն զամբյուղի արժեքի փոփոխությունը բազիսային ժամանակահատվածի հետ համեմատած:

- ՀՆԱ դեֆլյատորը բնութագրում է տվյալ ժամանակահատվածում տնտեսության ճյուղերի կողմից արտադրված ՀՆԱ-ում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը:

ՀՆԱ դեֆլյատորը հաշվարկվում է Պաաշեի կշռված ինդեքսային բանաձևով:

- ՀՀ-ում հաշվարկվում են հետևյալ ճյուղային գների ինդեքսները.
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս,
Գյուղատնտեսական արտադրության միջոցների գների ինդեքս,
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս,
Շինարարության գների ինդեքս

4. Գործազրկության մակարդակի գնահատումը

- Երկրի տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության հանրագումարը կազմում է աշխատանքային ռեսուրսները:
- Տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռն աշխատանքային ռեսուրսներում կազմում է տնտեսական ակտիվության մակարդակը:
- Գործազրկության մակարդակը հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ՝ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին:

Գործազրկության մեջ առանձնացվում են ֆրիկցիոն, կառուցվածքային և ցիկլային տեսակները:

Ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկության մակարդակները ձևավորում են գործազրկության բնական մակարդակը (կամ գործազրկության մակարդակ՝ լրիվ զբաղվածության պայմաններում), որը համապատասխանում է պոտենցիալ ՀՆԱ-ին: Բնական բառը հաճախ փոխարինվում է NAIRU (Non accelerating rate of unemployment) հապավումով:

Լրիվ զբաղվածությունն ենթադրում է, որ արտադրական կարողությունների 10-20% կարող են մնալ թերբեռնված, իսկ գործազրկության մակարդակը կարող է կազմել մինչև 7.5%:

Ցիկլային գործազրկությունը՝ գործազրկության փաստացի և բնական մակարդակների շեղումն է:

Աշխատանքային ռեսուրսները

- Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են
 - ✓ աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունից (ընդունված ազգային օրենսդրությամբ, բացառությամբ I և II խմբի չաշխատող հաշմանդամների և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող չաշխատող քաղաքացիների),
 - ✓ աշխատող կենսաթոշակառուներից և
 - ✓ աշխատող դեռահասներից:

Տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ զբաղված և գործազուրկ բնակչության հանրագումարն է, որը հետազոտվող ժամանակահատվածում ապահովում է աշխատուժի առաջարկը՝ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ ներառվում են աշխատունակ տարիքի առկա ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողներն ու ուսանողները, տնային տնտեսություն վարողները, երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները, ինչպես նաև անձինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում:

« աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը (1)

Աշխատանքային ռեսուրսներ

Տնտեսապես ակտիվ բնակչություն

Տնտեսապես
ոչ ակտիվ
բնակչություն

Զբաղվածներ
(բացի զինված ուժերում
գրադվածների)

Գործազուրկներ
(պաշտոնապես
գրանցված)

«Ձ աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը (2)

	1992	2001	2007	2008	2009
Աշխատանքային ռեսուրսներ	2,086.0	2,406.2	2,171.4	2,202.6	na
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1,634.4	1,411.7	1,184.3	1,192.5	1,185.1
Չբաղված բնակչություն	1,578.1	1,264.9	1,101.5	1,117.6	1,103.7
Գործազուրկներ	56.3	146.8	82.8	74.9	81.4
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	451.6	994.5	987.2	1,010.1	na
Գործազրկություն (միջին, %)	3.4	10.4	7.0	6.3	6.9
Տնտ. ակտիվ. մակարդակ (%)	78.4	58.7	54.5	54.1	na

Տնտեսապես ակտիվ բնակչություն. զբաղվածներ և գործազուրկներ (1)

- **Ջբաղվածների** մեջ ներառվում են և վարձու և ոչ վարձու աշխատողները՝ անկախ նրանից աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ միանգամյա:

Ջբաղվածներ են համարվում նաև տվյալ ժամանակահատվածում

- ✓ տարբեր պատճառներով աշխատանքից ժամանակավորապես բացակայողները,
- ✓ այն անձինք, ովքեր զբաղված են եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ արտադրված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման, կամ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է կազմել տնային տնտեսության սպառման մեջ:

Տնտեսապես ակտիվ բնակչություն. զբաղվածներ և գործազուրկներ (2)

- Ըստ ՀՀ գործող օրենսդրության **գործազուրկ** (պաշտոնապես գրանցված) են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի տեսակների), աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստական են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:
- **Աշխատանք փնտրողներ** են համարվում 16 տարին լրացած այն գործունակ անձինք, ովքեր, անկախ զբաղված լինելու հանգամանքից, աշխատանք ստանալու նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայություն:
- **Գործազրկության նպաստ** նշանակվում է աշխատունակ տարիքի այն քաղաքացիներին, ովքեր գրանցված են զբաղվածության տարածքային կենտրոններում և ՀՀ օրենսդրության համաձայն ունեն գործազուրկի կարգավիճակ: Նպաստը նշանակվում է այն անձանց, ովքեր ունեն առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ:
- 01.01.2009թ. դրությամբ աշխատունակ տարիքի բնակչությանը վերաբերում են 16 – 62 տարեկան տղամարդիկ և 16 – 60 տարեկան կանայք: